

## *Բժիշկ Գենետիկի Մասնագիտացմամբ Կլինիկական Օրդինատուրայի Ծրագրային Ապահովումը*

### Ղեկավարում

**Ծրագրի ղեկավար** – պատասխանատու օրդինատորի ընդհանուր կրթական ծրագրի ղեկավարման և վերահսկման համար բոլոր բժշկական կենտրոններում

**Կլինիկական բաժնի ղեկավարներ** – պատասխանատու օրդինատորի կլինիկական աշխատանքի համար համապատասխան յուրաքանչյուր բժշկական կենտրոնում

Օրդինատորի պատասխանատվությունն է լինելու բացահայտել թե՛ ուսուցման հնարավորությունները և թե՛ ավարտել մասնագիտացման համար անհրաժեշտ ուսուցման պահանջները

## Կրթական Մեթոդներ

- ✓ Կլինիկական
- ✓ Լաբորատոր
- ✓ Տեսական
- ✓ Վիճակագրության և IT կիրառումների ներածություն

• **Ամբուլատոր կլինիկական աշխատանք.** Նախնական ներածությունից հետո հիվանդների ամբուլատոր պայմաններում դիտում/վարում՝ մասնագիտացված կլինիցիստի ղեկավարությամբ, որը հնարավորություն կտա փորձառության և կլինիկական competence գնահատել նոր դեպքերը և վերանայել նախկին դեպքերը և ներկայացնել արդյունքները կլինիկական ղեկավարին:

• **Միջմասնագիտական թիմային հանդիպումներ.** Կլինիկական հիմնավորումների նպատակով դիտարկում և մասնակցություն այն քննարկումներին, երբ կլինիկական խնդիրները քննարկվում են տարբեր ոլորտի մասնագետների միջև:

• **Ռեֆլեկտիվ պրակտիկ աշխատանք.** Համատեղ բժշկական խորհրդատվության իրականացում մասնագետների հետ միասին , որը թույլ կտա գնահատել օրդինատորին և մշակել համապատասխան մասնագիտական աշխատանք հիվանդների և նրանց ընտանիքների հետ աշխատելու ընթացքում

• **Փորձի ձեռք բերում գենետիկական լաբորատորիաներում.** Ախտորոշիչ թեստավորման և պրենատալ/նեոնատալ սկրինինգի ժամանակ կիրառվող հիմնական պրոցեսների և մեթոդների սովորում՝ բջջագենետիկական, մոլեկուլային գենետիկական և կենսաքիմիական

### Հազվադեպ Դեպքերի Հետազոտում

Հաշվի առնելով, որ բազմաթիվ գենետիկական հիվանդություններ հազվադեպ են հանդիպում, ապա նմա դեպքերի հետազոտումը մասնագիտացված կլինիկաներում պետք է իրականացվի “կանչի” հիման վրա

• հազվադեպ հիվանդությունների կլինիկական վարումը հասկանալու համար (օր. ժառանգական մետաբոլիկ հիվանդություններ)

• կլինիկական գենետիկական պրակտիկայի նշանակությունը պարզելու համար (օր. վերարտադրողության հետ կապված դեպքերում) կամ գենետիկական հիվանդությունների վարումը պարզելու համար (օր. օնկոլոգիական կամ արյունաբանական հիվանդություններ)

### Տորմալ Դասավանդում:

- Հետազոտված դեպքերի ներկայացում և ամփոփում
- Մեմինարներ, խորհրդատվության խնդիրների քննարկում, դեպքերի սիմուլյացիա
- Հոդվածների քննարկում
- Դասախոսություններ

- Կլինիկական հստությունների ցուցադրում և դասավանդում


### **Անկախ ուսեցում**

- Գրականություն, ներառյալ էլեկտրոնային
- Նեղ մասնագիտացված հոդվածներ

## Կլինիկական պրակտիկա

- Շաբաթական երեք կլինիկական օր, ներառյալ՝
  - ✓ Ընդհանուր կլինիկական գենետիկա
  - ✓ Պրենատալ ախտորոշիչ կլինիկա
- Անսագրային ակուրբ ամիսը մեկ անգամ
- Շաբաթական մեկ անգամ քննարկման սեսիա, ներառյալ՝
  - ✓ Կլինիկական դեպքերի քննարկում
  - ✓ Դիսմորֆոլոգիական սլայդերի քննարկում
  - ✓ Գենետիկական խորհրդատվության մանրամասների քննարկում
- Մեկշաբաթյա դասընթաց մոլեկուլյար գենետիկական ախտորոշիչ լաբորատորիայում
- Մեկշաբաթյա դասընթաց ցիտոգենետիկական ախտորոշիչ լաբորատորիայում
- Մեկշաբաթյա դասընթաց մետաբոլիզմի/ բիոքիմիական բնածին շեղումների գենետիկական լաբորատորիայում
- Մեկշաբաթյա դասընթաց շճային/պրենատալ սկրինինգի վերաբերյալ
- Մեկշաբաթյա դասընթաց նեոնատալ սկրինինգի վերաբերյալ

# Գնահատում



## Է-համակարգ

Օրդինատորների համար գործելու է հետազոտությունների, դիտարկումների, մշակված արդյունքների գրանցման էլեկտրոնային համակարգ, որի հիման վրա ծրագրի ընդհանուր և կլինիկական ղեկավարները կներկայացնեն իրենց գնահատման արդյունքները, ամփոփումը և հաշվետվությունը

### 1. Աշխատանքային Ֆորմատիվ գնահատում

Կլինիկական փորձառության գնահատում  
Դեպքերի քննարկման գնահատում  
Հիվանդների վերահսկման գնահատում

### 2. Համընդհանուր գնահատում

Դեպքերի հաշվետվություն  
Ղեկավարի կողմից ամփոփում և զեկույց  
Միջանկյալ զեկույց  
Վերջնական զեկույց

# Սերտիֆիկացիա

Կլինիկական Գենետիկայի սերտիֆիկացման քննություն

Կլինիկական Գենետիկայի մասնագիտացման հանձնաժողովը պատասխանատու է

սերտիֆիկացման քննության մշակման  
քննարկում է օրդինատորի մոտ կրթական ծրագրի առաջընթացը ծրագրի պահանջներին  
համապատասխան

Ծրագրի բավարար ավարտից հետո միայն հնարավոր է դիմել սերտիֆիկացման քննության

Սերտիֆիկացման քննության ձևաչափը I) գրավոր և II) բանավոր  
Հարցերը մշակվում են ԵՊԲՀ-ի փորձագետների կողմից